ԴԱՏԱԿԱՆ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏ

0009, ՀՀ, ք. Երևան, Կորյունի 15/1, 010 511 820, www.court.am

N ԴԴ-3-Ե-2162

« 20 » մարտի 2024թ.

«ԶԻՆՏԵՔՍՏԻԼ» ՍՊԸ-Ի ՏՆՕՐԵՆ Ա. ՎԱՆԵՑՅԱՆԻՆ
«ՀՈՒԴԻՍ» ՍՊԸ-Ի ՏՆՕՐԵՆ Հ. ՏՈՆՈՅԱՆԻՆ
«ԱՐՄԻՆԵ ՀՈՎՍԵՓՅԱՆ ԷԼԲԵԿԻ» Ա/Ձ-ԻՆ

Սույնով ծանուցում եմ, որ Դատական դեպարտամենտի կարիքների համար համազգեստի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-24/04» ծածկագրով գնման ընթացակարգի հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում գնահատող հանձնաժողովի կողմից առաջին տեղը զբաղեցրած մասնակիցների հայտերի գնահատման արդյունքում Ձեր կողմից ներկայացված հայտերում արձանագրվել են հրավերի պահանջների նկատմամբ հետևյալ անհամապատասխանությունները.

ԶԻՆՏԵՔՍՏԻԼ ՍՊԸ

- ներկայացված հայտում առկա էլեկտրոնային աճուրդին մասնակցելու դիմում-հայտարարությունը (Հավելված 1) կազմված չէ հրավերով սահմանված պայմաններին համապատասխան, մասնավորապես՝

- դիմում-հայտարարության երրորդ նախադասությունում մասնակցի գործունեության հասցեն նշված է ոչ ամբողջական,
- դիմում-հայտարարության 1)-ին կետում ներառված չէ «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-24/04» ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին մասնակցին փոխկապակցված անձանց բավարարելու մասին հավաստումը:

ՀՈՒԴԻՍ ՍՊԸ

- ներկայացված հայտում առկա փաստաթղթերը հաստատված չեն տնօրենի էլեկտրոնային թվային ստորագրությամբ, հաստատված են այլ անձի էլեկտրոնային թվային ստորագրությամբ, սակայն հայտով ներկայացված չէ վերջինիս այդ լիազորությունը վերապահված լինելու մասին փաստաթուղթ (լիազորագիր):

«Արմինե Հովսեփյան Էլբեկի» Ա/Ձ

- ներկայացված հայտում առկա էլեկտրոնային աճուրդին մասնակցելու դիմում-հայտարարությունը (Հավելված 1) կազմված չէ հրավերով սահմանված պայմաններին համապատասխան, մասնավորապես՝ դիմում-հայտարարության 1)-ին կետում ներառված չէ «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-24/04» ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված մասնակցության

- իրավունքի պահանջներին մասնակցին փոխկապակցված անձանց բավարարելու մասին հավաստումը,

- ներկայացված հայտում առկա էլեկտրոնային աճուրդին մասնակցելու դիմում-հայտարարությունը (Հավելված 1) հաստատված է լիազորված անձի էլեկտրոնային թվային ստորագրությամբ, հայտով ներկայացված է վերջինիս այդ լիազորությունը վերապահված լինելու մասին փաստաթուղթ՝ լիազորագիր, սակայն լիազորագրով «Արմինե Հովսեփյան Էլբեկի» Ա/Ձ-ի տնօրենը լիազորել է հիշյալ անձին «Արմինե Հովսեփյան Էլբեկի» Ա/Ձ-ի անունից մասնակցել պետական և այլ իրավասու կազմակերպությունների կողմից հայտարարված գնման գործընթացներին, այն դեպքում, երբ հայտը ներկայացվել է Դատական դեպարտամենտի կողմից հայտարարված գնման ընթացակարգին:

Վերոգրյալով պայմանավորված և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետը, ինչպես նաև «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-24/04» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի ՄԱՍ I-ի 8.11-րդ կետը՝ առաջարկում եմ մինչև սույն թվականի **մարտի 21-ը ներառյալ** eauction.armeps.am համակարգի միջոցով շտկել վերոնշյալ անհամապատասխանությունները:

Միաժամանակ հայտնում եմ, որ սահմանված ժամկետում արձանագրված անհամապատասխանությունները չշտկելու դեպքում՝ հայտերը կգնահատվեն անբավարար և կմերժվեն:

ՂԵԿԱՎԱՐԻ ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐՑԵՐՈՎ ՏԵՂԱԿԱԼԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ

ԴԱՎԻԹ ՄԵԼԻՔԲԵԿՅԱՆ

Կատ՝. «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-24/04» ծածկագրով
գնման ընթացակարգի համակարգող՝ Գ. Դադիվանյան
Հեռ.՝ /+37410/ 511-783, 511-788